

ԹԵՄԱ 27

Դասընթացի անվանումը՝	«Քրեական դատավարությունում դատական քննության արագացված կարգի կիրառումը»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների, վերաքննիչ քրեական դատարանի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար: Դասընթացը կարող է օգտակար լինել նաև վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների համար:

Դասընթացն անդրադառնում է քրեական դատավարությունում գործերի քննության արագացված կարգի կիրառման ժամանակ ծագող հիմնախնդիրների ներկայացմանն ու քննարկմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Արագացված կարգի կիրառման հիմքերը:
- Սիջնորդություն ներկայացնելու կարգը:
- Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը:
- Դատավճռի բողոքարկման սահմանները:
- ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ներկայացում:

Դասընթացը վարում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Հովհաննես Ղուկասյանը: